Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-834[1]-26.04.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 61-63-րդ կետերով՝

61) բաժանորդային տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, համացանցն օգտագործողի կամ բաժանորդի նույնականացման տվյալները, հաղորդակցման ընթացքում օգտագործվող սարքավորումների նույնականացման համարը, հեռախոսահամարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հեռախոսազանգն ստացողի անհատականացման տվյալները.

62) փոխանցվող տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը, համացանցին միանալու և

համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը, տևողությունը, տեղաշարժը, համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն պարզելու համար անհրաժեշտ տվյալները,

63) բովանդակային տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ հեռախոսային խոսակցության, տեքստային, պատկերային, ձայնային, տեսաձայնային և այլ հաղորդագրության բովանդակությունը, հեռախոսազանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարը, որին փոխանցվել է հեռախոսազանգը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ հաղորդակցության բովանդակությունը:»:

Հոդված 2. 209-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենսգրքի 232-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված տվյալներ պարունակող տեղեկատվության պահանջը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 232-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հսկող դատախազի կողմից հաստատված քննիչի որոշմամբ կարող են պահանջվել նաև բաժանորդային տվյալները:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով.

«3.1. Բացառապես դատարանի որոշմամբ կարող են պահանջվել փոխանցվող տվյալները:».

3) 4-րդ մասում «Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերը փոխարինել «Հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ» բառերով:

4) Լրացնել 4.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը կարող են պահանջվել, եթե համապատասխան տվյալները վերաբերում են՝

1) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալին.

3) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ.

4) այն իրավաբանական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 234-րդ հոդվածը լրացնելը հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Եթե բնակարանի խուզարկության արդյունքում հայտնաբերվել են էլեկտրոնային սարքեր կամ կրիչներ, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ գործողության կատարումը թույլատրելու մասին որոշմամբ կամ ողջամտորեն չէր ակնկալվում, ապա դրանցում պարունակվող թվային տվյալների որոնումը կարող է կատարվել միայն թվային խուզարկություն կատարելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարելու և միջնորդվող ապացուցողական գործողության կատարումը թույլատրելու մասին դատարանի որոշմամբ:»:

Հոդված 5. Օրենսգրքի 236-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Եթե դատարանի որոշմամբ հաստատվել է, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ վարույթի համար նշանակություն ունեցող տվյալներ կարող են պահեստավորված լինել համակարգչային մեկ այլ համակարգում, որ այդ տվյալների նկատմամբ հասանելիություն հնարավոր է ձեռք բերել սկզբնական համակարգչային համակարգից, և որ հապաղումը կարող է հանգեցնել վարույթի համար նշանակություն ունեցող տվյալների կորստի կամ ոչնչացման, ապա թվային խուզարկությունը կարող է տարածվել նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող համակարգչային այդ համակարգի նկատմամբ»:

Հոդված 6. Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«2. Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման ենթակա են բովանդակային տվյալները:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-834[1]-26.04.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասը~~ը~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 61-63-րդ կետերով՝

61) բաժանորդային տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, ~~հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները,~~ համացանցն օգտագործողի կամ բաժանորդի նույնականացման տվյալները, հաղորդակցման ընթացքում օգտագործվող սարքավորումների նույնականացման համարը, հեռախոսահամարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հեռախոսազանգն ստացողի անհատականացման տվյալները.

62) փոխանցվող տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար

անհրաժեշտ տվյալները, ~~վայրը,~~ համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը, համացանցին միանալու և համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը, տևողությունը, տեղաշարժը, համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն պարզելու համար անհրաժեշտ տվյալները,

63) բովանդակային տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ հեռախոսային խոսակցության, տեքստային, պատկերային, ձայնային, տեսաձայնային և այլ հաղորդագրության բովանդակությունը, հեռախոսազանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարը, որին փոխանցվել է հեռախոսազանգը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ հաղորդակցության բովանդակությունը:»:

Հոդված 2. 209-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենսգրքի 232-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված տվյալներ պարունակող տեղեկատվության պահանջը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 232-րդ հոդվածում՝

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հսկող դատախազի կողմից հաստատված քննիչի որոշմամբ կարող են պահանջվել նաև բաժանորդային տվյալները:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով.

«3.1. Բացառապես դատարանի որոշմամբ կարող են պահանջվել փոխանցվող տվյալները:».

3) 4-րդ մասում «Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերը փոխարինել «Հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ» բառերով:

4) Լրացնել 4.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը կարող են պահանջվել, եթե համապատասխան տվյալները վերաբերում են՝

1) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալին.

3) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ.

4) այն իրավաբանական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 234-րդ հոդվածը լրացնելը հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Եթե բնակարանի խուզարկության արդյունքում հայտնաբերվել են էլեկտրոնային սարքեր կամ կրիչներ, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ գործողության կատարումը թույլատրելու մասին որոշմամբ կամ ողջամտորեն չէր

ակնկալվում, ապա դրանցում պարունակվող թվային տվյալների որոնումը կարող է կատարվել միայն թվային խուզարկություն կատարելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարելու և միջնորդվող ապացուցողական գործողության կատարումը թույլատրելու մասին դատարանի որոշմամբ:»:

Հոդված 5. Օրենսգրքի 236-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Եթե դատարանի որոշմամբ հաստատվել է, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ վարույթի համար նշանակություն ունեցող տվյալներ կարող են պահեստավորված լինել համակարգչային մեկ այլ համակարգում, որ այդ տվյալների նկատմամբ հասանելիություն հնարավոր է ձեռք բերել սկզբնական համակարգչային համակարգից, և որ հապաղումը կարող է հանգեցնել վարույթի համար նշանակություն ունեցող տվյալների կորստի կամ ոչնչացման, ապա թվային խուզարկությունը կարող է տարածվել նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող համակարգչային այդ համակարգի նկատմամբ»:

Հոդված 6. Օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«2. Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման ենթակա են բովանդակային տվյալները:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834-26.04.2024-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834[1]-26.04.2024-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834[2]-26.04.2024-ՊԻ-011/1), «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834[3]-26.04.2024-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834[6]-26.04.2024-ՊԻ-011/1) ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-834[7]-26.04.2024-ՊԻ-011/1) ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2-րդ հավելվածում, որպես կիբերհանցագործություն, նախատեսված է ՀՀ քրեական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ արտոնագրային իրավունքը խախտելը, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «Կիբեռհանցագործությունների մասին» Բուդապեշտի 2001թ նոյեմբերի 23-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածն անդրադառնում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտման վերաբերյալ հանցագործություններին, որոնք արդեն իսկ ներառված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2-րդ հավելվածում: Միաժամանակ, Բուդապեշտի կոնվենցիան չի անդրադառնում տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով արտոնագրային իրավունքի խախտմանը: Ըստ այդմ,		

			առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2-րդ հավելվածից հանել «Հոդված 228. 2-րդ մաս, 2-րդ կետ. Արտոնագրային իրավունքը խախտելը, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով.» բառերը:		
2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր լրացվող 2-րդ հավելվածում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 3-րդ մասի հիշատակումից զատ, առաջարկվում է լրացնել նաև վերջինիս օբյեկտիվ կողմի նկարագրությունը՝ ապահովելով նորմատիվ իրավական ակտում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			օրենսդրական տեխնիկայի կիրառման միասնական մոտեցում: Ըստ այդմ, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում նոր լրացվող 2-րդ հավելվածում ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «**3-րդ մաս.** նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է մերձավոր ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է եղել երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն, կամ կրթական կամ առողջապահական կազմակերպության այն աշխատակցի կողմից, որը պարտավոր էր հոգ տանել երեխայի մասին կամ վերահսկել նրա վարքագիծը կամ 2) զուգորդվել է անչափահասի նկատմամբ		

			դաժան վերաբերմունքով.»:		
3.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է պահպանել հղումի հստակությունը՝ նշելով ոչ միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածի համարը, այլ նաև՝ հոդվածի համապատասխան մասը, որտեղ կատարվելու է լրացումը՝ հետևելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին առ այն, որ օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը: Ըստ այդմ, առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի «հոդվածը» բառը փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում լրացվող 61-րդ կետի համաձայն՝ «61) բաժանորդային տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների (….) հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը (….)»: Իսկ 62-րդ կետի համաձայն՝ «62) փոխանցվող տվյալներ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ (….) հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, վայրը (….)»: Պետք է նշել, որ «հաղորդակցվողների գտնվելու վայրը» և «հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			ավարտելու վայրը» հասկացությունները, ըստ էության, նկարագրում են նույն երևույթը, այն է՝ կոնկրետ հեռախոսային հաղորդակցության ընթացքում հաղոդակցվողների գտնվելու տեղանքը, կոորդինատները: Նույն երևույթը տարբեր հասկացությունների միջոցով նկարագրելը խնդրահարույց է, քանի որ այդ հասկացությունները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում ներառվելու են երկու տարբեր իրավական ռեժիմով պաշտպանվող տեղեկությունների շարքում: Այսինքն՝ հաղորդակցության վայրը պարզելու վերաբերյալ տվյալը կարող է որակվել և՛ որպես բաժանորդային տվյալ, և՛ որպես փոխանցվող տվյալ, որոնցից յուրաքանչյուրի տրամադրումը ունի հատուկ ընթացակարգ, որի չպահպանումը հանգեցնելու է ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության: Ըստ այդմ, առաջարկվում է		

			նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում լրացվող՝ 1) 61-րդ կետից հանել «հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները» բառերը, 2) 62-րդ կետում 1-ին «վայրը» բառը փոխարինել «հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները» բառերով:		
5	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ **թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը** հանդիսանում է գաղտնի քննչական գործողություն, իսկ 242-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գաղտնի քննչական գործողությունը կատարվում է	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			քննիչի հանձնարարությամբ՝ դատարանի որոշման հիման վրա: Օրենսգրքի 249-րդ հոդվածը նախատեսում է նշված գաղտնի քննչական գործողության կատարման վերաբերյալ կարգավորումներ: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն տվյալները, որոնք ենթակա են թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման: Միաժամանակ, օրենսգրքի 232-րդ հոդվածը նախատեսում է **«Տեղեկատվության պահանջ»** քննչական գործողության կատարման պայմանները: Նշված քննչական գործողության շրջանակներում ևս կարող են պահանջվել հեռախոսային կամ համացանցային հաղորդակցությանը վերաբերող տվյալներ: Այս կապակցությամբ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված է՝		

			1) նոր խմբագրությամբ շարադրել օրենսգրքի՝ բաժանորդային, **փոխանցվող և բովանդակային** տվյալները սահմանող դրույթները, 2) թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման (գաղտնի քննչական գործողություն) ենթակա համարել **բովանդակային տվյալները** (դատական երաշխիքները պահպանվում են), 3) «Տեղեկատվության պահանջ» քննչական գործողության շրջանակներում **փոխանցվող տվյալները** պահանջել բացառապես դատարանի որոշմամբ (դատական երաշխիքները պահպանվում են): Ներկայումս գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով առկա են **«Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում»** գաղտնի քննչական գործողության շրջանակներում ընդգրկված այնպիսի տվյալներ, որոնք իրենց		

			բնույթով **ոչ թե բովանդակային** տվյալներ են, այլ՝ **փոխանցվող:** Ընդ որում, երբեմն անհրաժեշտություն է առաջանում՝ ձեռք բերելու ոչ թե ապագայում ստացվելիք, այլ՝ առկա նմանատիպ տվյալներ: Մինչդեռ, գաղտնի քննչական գործողությունը հնարավորություն է ընձեռնում՝ ձեռք բերելու **միայն ապագայում ստացվելիք** տվյալները, այն էլ՝ **միայն ծանր և առանձնապես ծանր** հանցագործությունների դեպքերով: Գաղտնի քննչական գործողության համար ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շեմ նախատեսելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված քննչական գործողության արդյունքում պետք է ստացվեն **բովանդակային տվյալներ:** Բայց, քանի որ ներկայումս որոշ տվյալներ (օրինակ՝ ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի մուտքային և ելքային զանգերը, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը,		

			համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը), ընդգրկված լինելով գաղտնի քննչական գործողությամբ ձեռք բերվող տվյալների ցանկում, ըստ էության, **ոչ թե բովանդակային են, այլ՝ փոխանցվող,** իսկ միջազգային փորձի տեսանկյունից փոխանցվող տվյալների համար երաշխիքների շրջանակը կարող է ավելի մեղմ լինել, ուստի առաջարկվում է որոշ տվյալներ նախատեսել «Տեղեկատվության պահանջ» քննչական գործողության շրջանակներում ձեռք բերվող տվյալների ցանկում: Միաժամանակ, առաջարկվում է նշված դեպքում պահպանել դատական երաշխիքները, ինչպես նաև՝ հնարավոր համարել դրանց ստացումը նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերում, այդ թվում՝ անցյալում տեղի ունեցած համապատասխան մուտքային և ելքային զանգերի կապակցությամբ՝ պահպանելով այն անձանց շրջանակը, ում վերաբերյալ համապատասխան		

			տվյալները կարող են ստացվել: Ըստ այդմ, նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 232-րդ հոդվածում առաջարկվում է լրացնել նոր 4.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «4) Լրացնել 4.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «4.1. Ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի և օգտագործողի մուտքային և ելքային զանգերը (հաղորդագրությունները), հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը կարող են պահանջվել, եթե համապատասխան տվյալները վերաբերում են՝ 1) այն ֆիզիկական անձին, որի		

			վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր. 2) մեղադրյալին. 3) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ. 4) այն իրավաբանական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:»:»		

6	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Հետևաբար, առաջարկվում է նախագծի առաջին հոդվածում շտկել տեխնիկական վրիպակը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով կարգավորվում է սեփականության իրավունքի ծագման պահը, սակայն լրացումը նախատեսվում է կատարել սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածում: Այս անհամապատասխանությունը վերացնելու նպատակով առաջարկվում է լրացումը	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			կատարել սեփականության իրավունքի ծագման պահը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածում: Ըստ այդմ, առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի «172-րդ հոդվածի 6-րդ մասը» բառերը փոխարինել «176-րդ հոդվածը» բառերով, «7-րդ» բառը՝ «3-րդ» բառով, ինչպես նաև «3.» թիվը՝ «7.» թվով:		
8	ՀՀ կառավարություն	«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացվող 6.1-ին հոդվածով նախատեսվում է, որ կրիպտոարժույթի օտարման կամ այլ հիմքով դրա նկատմամբ սեփականության ձեռքբերման դիմաց վճարումը և վճարման ստացումը իրականացվում է անկանխիկ եղանակով՝ անկախ վճարման ենթակա գումարի չափից: Հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անկանխիկ ձևով գործառնությունը (վճարում)՝ կանխիկ կամ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը): Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի 1-ին հոդվածով լրացվող օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկվում է «եղանակով» բառը փոխարինել «ձևով» բառով:		
9	ՀՀ կառավարություն	«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ	ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախաձեռնվել են կրիպտոակտիվների շրջանառության ոլորտի համապարփակ կարգավորումների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		հոդված	մշակման աշխատանքներ, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել հաջորդ տարվա ընթացքում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկվում է սույն նախագիծն ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսել 2026 թվականի հունվարի 1-ից: Ըստ այդմ, առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից» բառերով:		
10	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 1-ին հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «սահմանադրական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			օրենք» բառերը: Հետևաբար, առաջարկվում է նախագծի առաջին հոդվածում շտկել տեխնիկական վրիպակը:		
11	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով, որ նախագծում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը 1-ին հոդվածից հետո չի հիշատակվում՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
12	ՀՀ կառավարություն	«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով, որ նախագծում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը 1-ին հոդվածից հետո չի հիշատակվում՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, իսկ «օրենքը» բառը, ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու համար, առաջարկվում է փոխարինել «օրենքի» բառով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է: